

Արձանագրություն N 8

ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի՝
էլեկտրոնային եղանակով անցկացված արտահերթ նիստի

Նախագահ՝ Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան

Մինչև 03.10.2019թ. քվեարկել են խորհրդի 10 անդամներից 9-ը:

Չի քվեարկել՝ Արմեն Հայրապետյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Հավանության տալ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին:

2019թ. հոկտեմբերի 1-ին խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին է ուղարկվել շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակը և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝ դրանց կողմ կամ դեմ լինելու վերաբերյալ քվեարկություն կատարելու նպատակով: Մինչև 03.10.2019թ. շուկայի վերահսկողության տեսչական մարմնի էլեկտրոնային հասցեին ստացվել են խորհրդի 10 անդամներից 9-ի կողմից ուղարկված «կողմ եմ» բառերը: ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետի համաձայն հեռակա քվեարկությունը համարվում է կայացած:

Խորհուրդը որոշեց հավանություն տալ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին՝ 9 կողմ ձայներով:

Խորհրդի նախագահ՝



Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝



Սուրեն Պետրոսյան